ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ Վ. ՀՈԿՏԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՈՒՄ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10-Ա

ք. Երևան 16 հոկտեմբերի, 2013թ.

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը՝ կազմով Է. Բաբայան, Ա. Շուշյան, Լ. Պետրոսյան, Ա. Խուդավերդյան (այսուհետ՝ Հանձնաժողով), համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վ. Հոկտանյանի 2013 թվականի հուլիսի 26-ի Թի-13/41 դիմումի հիման վրա թիվ 9-Ա որոշմամբ Հանձնաժողովի կողմից հարուցված՝ ներքաղաքային տրանսպորտի ուղեվարձը բարձրացնելիս Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանի շահերի բախման իրավիճակում գտնվելու, կամ նման ռիսկի առկայության, ներդրումները կառավարելիս պաշտոնեական դիրքը և լիազորությունները օգտագործելու վերաբերյալ վարույթի արդյունքում

ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանի՝ Երևան քաղաքի ներքաղաքային տրանսպորտի փոխադրումներ իրականացնելու լիցենզիա ունեցող կազմակերպությունների առնչությամբ շահերի բախման

իրավիճակում գտնվելու վերաբերյալ եզրակացությունը՝ համաձայն կից հավելվածի:

Սույն որոշումը բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն կայացվելուց հետո մեկամսյա ժամկետում:

Հանձնաժողովի նախագահ ***Է. Բաբայան***

Հավելված
Բարձրաստիճան պաշտոնատար
անձանց էթիկայի հանձնաժողովի
16 հոկտեմբերի 2013թ.թիվ 10-Ա որոշման

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ Վ. ՀՈԿՏԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՈՒՄ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը՝ կազմով Է. Բաբայան, Ա. Շուշյան, Լ. Պետրոսյան, Ա. Խուդավերդյան (այսուհետ՝ Հանձնաժողով), համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի, քննարկեց Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վ. Հոկտանյանի 2013 թվականի հուլիսի 26-ի Թի-13/41 դիմումը՝ ներքաղաքային տրանսպորտի ուղեվարձը բարձրացնելիս Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանի շահերի բախման իրավիճակում գտնվելու կամ նման ռիսկի առկայության, ներդրումները կառավարելիս պաշտոնեական դիրքը և լիազորությունները օգտագործելու, ինչպես նաև Երևանի քաղաքապետի կողմից Հանձնաժողովին ներկայացված գույքի և եկամուտների հայտարարագրերը ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով (այսուհետ՝ ԿԸՀ) ներկայացված հայտարարագրի հետ համադրելու վերաբերյալ:

1. Դիմումի առարկան

1. Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վ. Հոկտանյանը իր դիմումում մասնավորապես նշում է, որ Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի կողմից գույքի և եկամուտների հայտարարագիրը որպես Երևանի ավագանու թեկնածու ԿԸՀ ներկայացնելուց հետո մամուլում սկիզբ առան կասկածներ և տարաբնույթ մեկնաբանություններ՝ կապված քաղաքապետի գույքի և եկամուտների օրինականության վերաբերյալ: Մինչդեռ, ըստ Հանձնաժողովին ներկայացրած 2011թ. և 2012թ. գույքի և եկամուտների հայտարարագրի Տ. Մարգարյանը որպես սեփականություն չունի որևէ շարժական կամ անշարժ գույք կամ էլ եկամտի այլ աղբյուր աշխատավարձից բացի:

2. Կապված ներքաղաքային տրանսպորտի ուղեվարձի բարձրացման հետ՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վ. Հոկտանյանը իր դիմումում մասնավորապես նշում է, որ մամուլում հաճախացել են հրապարակումները քաղաքապետի բիզնես գործունեության,

մասնավորապես այն մասին, որ որոշ երթուղիներ սպասարկող կազմակերպություններ պատկանում են Երևանի քաղաքապետին և նրա մերձավոր ազգականներին: Այս կապակցությամբ դիմումում հղում է կատարվում «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետին, որը սահմանում է, որ բարձրաստիճան պաշտոնատար անձը պարտավոր է *«ձգտել կառավարել իր ներդրումներն այնպես, որ հնարավորինս նվազագույնի հասցվեն շահերի բախման իրավիճակները»:* Դիմումում հղում է կատարվում նաև նույն օրենքի 31-րդ հոդվածին, համաձայն որի՝ շահերի բախում առաջանալու դեպքում բարձրաստիճան պաշտոնատար անձը, պարտավոր է իր վերադաս անձին գրավոր տեղեկացնել շահերի բախման վերաբերյալ հայտարարություն՝ ներկայացնելով շահերի բախմանը վերաբերող կոնկրետ հանգամանքները: Բացի այդ, բարձրաստիճան պաշտոնատար անձն իրավունք ունի բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովից ստանալ պարզաբանում կոնկրետ իրավիճակում շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու անհրաժեշտության մասին:

3. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վ. Հոկտանյանը խնդրել է Հանձնաժողովին հարուցել վարույթ և պարզել. 1) մամուլի հրապարակումներում նշված փաստերի համապատասխանությունը իրականությանը, 2) ներքաղաքային փոխադրավարձը բարձրացնելիս քաղաքապետը գտնվել է արդյո՞ք շահերի բախման իրավիճակում կամ եղել է նման ռիսկ, և 3) ներդրումները կառավարելիս քաղաքապետի կողմից չեն օգտագործվել արդյո՞ք պաշտոնեական դիրքը և լիազորությունները:

2. <u>Հանձնաժողովի ուսումնասիրությունները</u>

4. Ձեռնարկված ուսումնասիրության շրջանակներում Հանձնաժողովը 05.08.2013 թվականին Ե-172 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանին և 12.08.2013 թվականի թիվ 01/7-46212Հ գրությամբ ստացել է Երևան քաղաքի ներքաղաքային տրանսպորտի փոխադրումներ իրականացնելու լիցենզիա ունեցող կազմակերպությունների ցանկը, ինչպես նաև ներքաղաքային տրանսպորտի ուղեվարձի բարձրացման խնդրանքով Երևանի քաղաքապետին դիմում ներկայացրած կազմակերպությունների ցանկը:

5. Հանձնաժողովը 05.08.2013 թվականին թիվ Ե-173 գրությամբ դիմել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին (այսուհետ՝ ԿԸՀ) և 15.08.2013 թվականի թիվ 01-580 գրությամբ ստացել է Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանի՝ Երևան քաղաքի 2013 թվականի ավագանու ընտրությունների ժամանակ ԿԸՀ ներկայացրած հայտարարագրի պատճենը:

6. Միաժամանակ, Հանձնաժողովը 26.08.2013 թվականին թիվ Ե-176 գրությամբ դիմել է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը և 30.08.2013 թվականի թիվ 3-2/1472-13 գրությամբ ստացել է Երևանի քաղաքապետի կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի ներքաղաքային տրանսպորտի փոխադրումներ իրականացնելու լիցենզիա ունեցող կազմակերպությունների ցանկում ներառված կազմակերպությունների գրանցման, դրանց կազմակերպաիրավական տեսակների, գտնվելու վայրերի, մասնակիցների կազմի և տնօրենների, ինչպես նաև 01.01.2012 թվականից առ այսօր գտնվելու վայրերի, մասնակիցների կազմի և տնօրենների փոփոխությունների վերաբերյալ համապարփակ տեղեկություններ:

7. Հանձնաժողովը 29.08.2013 թվականին թիվ Ե-177 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի առկայության, տեսակի, գտնվելու վայրի հասցեի, գույքի վարձակալության պայմանագրերի, ինչպես նաև 01.01.2012 թվականից առ այսօր անշարժ գույքի կազմում կատարված փոփոխությունների վերաբերյալ: Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից 03.09.2013 թվականին ստացված թիվ Ե/ԿԽ/5708-13 գրությամբ Հանձնաժողովին է տրամադրվել պահանջվող տեղեկատվությունը:

8. Հանձնաժողովը 29.08.2013 թվականին թիվ Ե-178 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ ոստիկանությանը խնդրելով տրամադրել Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող շարժական գույքի առկայության, շարժական գույքի տեսակի, անվանման, մակնիշի, սերիայի, վարձակալության պայմանագրերի, ինչպես նաև 01.01.2012 թվականից առ այսօր շարժական գույքի կազմում կատարված փոփոխությունների վերաբերյալ: ՀՀ ոստիկանությունից 09.09.2013 թվականին ստացված Թիվ 19/2-1376 գրությամբ Հանձնաժողովին է տրամադրվել պահանջվող տեղեկատվությունը:

3. Վարույթի հարուցումը

9. Համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի՝ էթիկայի հանձնաժողովը վարույթ է հարուցում սեփական նախաձեռնությամբ: Էթիկայի հանձնաժողովի համար սեփական նախաձեռնությամբ վարույթ հարուցելու հիմք կարող են հանդիսանալ ինչպես որևէ անձի դիմումի հիման վրա, այնպես էլ Հանձնաժողովի կողմից սեփական նախաձեռնությամբ անցկացված ուսումնասիրությունները, եթե դրանց արդյունքում ի հայտ են գալիս որևէ բարձրաստիճան պաշտոնատար անձի շահերի բախման իրավիճակում գտնվելու առերևույթ հիմքեր:

10. Սույն վարույթի հարուցման համար բարձրաստիճան պաշտոնատար անձի շահերի բախման իրավիճակում գտնվելու առերևույթ հիմք է հանդիսացել դիմումում բերված՝ մամուլի հրապարակումների պնդումները, որ Երևան քաղաքի ներքաղաքային տրանսպորտի փոխադրումներ իրականացնելու լիցենզիա ունեցող կազմակերպությունների ցանկում առկա են ընկերություններ, որոնց մասնակից կամ բաժնետեր են հանդիսանում Երևանի քաղաքապետը կամ նրա հետ փոխկապակցված անձինք և որ ներքաղաքային փոխադրավարձը բարձրացնելիս քաղաքապետը գտնվել է շահերի բախման իրավիճակում կամ եղել է նման ռիսկ:

11. Հանձնաժողովի կողմից ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը 01.01.2012 թվականից առ այսօր, այսինքն՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահին և դրանից հետո, չի հանդիսացել Երևան քաղաքի ներքաղաքային տրանսպորտի փոխադրումներ իրականացնելու լիցենզիա ունեցող կազմակերպություններից որևէ մեկի սեփականատեր կամ մասնակից: Միևնույն ժամանակ, Հանձնաժողովի տրամադրության տակ գտնվող փաստաթղթերի ուսումնասիրությամբ չի պարզվել, թե Երևան քաղաքի ներքաղաքային տրանսպորտի փոխադրումներ իրականացնելու լիցենզիա ունեցող կազմակերպություններից որևէ մեկի սեփականատեր կամ մասնակից են հանդիսանում Երևանի քաղաքապետի հետ փոխկապակցված անձինք:

12. Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը 2013 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 9-Ա որոշմամբ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վ. Հոկտանյանի դիմումի հիման վրա հարուցել է վարույթ:

13. Հանձնաժողովը 2013 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ Ե-186 գրությամբ տեղեկացրել է Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանին հարուցված վարույթի վերաբերյալ և առաջարկել նշված գրությունը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում ներկայացնել առարկություններ և բացատրություններ դիմումում ներկայացված հարցերի վերաբերյալ:

4. <u>Իրավական հիմքերը</u>

14. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2011 թվականի մայիսի 26-ին և ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարի 1-ից: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետը սահմանում է.

«շահերի բախում՝ իրավիճակ, երբ բարձրաստիճան պաշտոնատար անձն իր լիազորություններն իրականացնելիս պետք է կատարի գործողություն կամ ընդունի որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել.»,

իսկ օրենքի 30-րդ հոդվածը սահմանում է թե ինչ է նշանակում անձնական շահերով առաջնորդվելը.

«1. Բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից իր կամ իրեն փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է բարձրաստիճան պաշտոնատար անձի լիազորությունների շրջանակում այնպիսի գործողություն կատարելը կամ որոշում ընդունելը (այդ թվում՝ կոլեգիալ մարմնի կազմում որոշում ընդունելուն մասնակցելը), որը թեև ինքնին օրինական է, սակայն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև՝

1) իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

2) իր կամ իր հետ փոխկապակցված անձի անդամակցած ոչ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

3) իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

4) իր հետ փոխկապակցված անձին պաշտոնում նշանակմանը:

3. Ըստ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթների՝ բարձրաստիճան պաշտոնատար անձը չի առաջնորդվում իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով, եթե տվյալ գործողությունը կամ որոշումն ունի համընդհանուր կիրառելիություն և անդրադառնում է անձանց լայն շրջանակի վրա այնպես, որ ողջամտորեն չի կարող մեկնաբանվել որպես բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել:»

15. Այսինքն՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը շահերի բախման իրավիճակ դիտարկում է 4 միաժամանակյա պարտադիր պայմանների առկայություն, դրանք են՝

1. Բարձրաստիճան պաշտոնատար անձը պետք է գործի <u>իր լիազորությունների շրջանակում</u>,

2. Բարձրաստիճան պաշտոնատար անձը իր լիազորությունների շրջանակում պետք է <u>գործողություն կատարի կամ որոշում ընդունի</u>,

3. Այդ որոշումը կամ գործողությունը պետք է լինի <u>օրինական</u>,

4. Այդ որոշումը կամ գործողությունը պետք է <u>հանգեցնի իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրության բարելավմանը:</u>

16. Այսպիսով՝ օրենքով սահմանված վերը նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում դադարում ենք գործ ունենալ շահերի բախման իրավիճակի հետ:

17. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետը սահմանում է բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց շրջանակը.

«բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձինք՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող անձինք: Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ են գտնվում արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաև վերջիններիս հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք: Արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ են գտնվում անձի զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները.»

18. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց մասին հայտարարագրման պարտականությունը.

«Բարձրաստիճան պաշտոնատար անձինք սույն օրենքով նախատեսված կարգով բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով են ներկայացնում գույքի, եկամուտների հայտարարագրեր:»

19. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է հայտարարագրման ժամկետները.

«Բարձրաստիճան պաշտոնատար անձը պաշտոնեական պարտականությունները ստանձնելու, դադարեցնելու օրվա դրությամբ հայտարարագրերը այդ օրերին հաջորդող 15 օրվա ընթացքում ներկայացնում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում հայտարարագրեր են ներկայացնում նաև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ոչ ուշ, քան տվյալ տարվան հաջորդող տարվա փետրվարի 15-ը:»

5. <u>Երևանի քաղաքապետի առարկությունները և բացատրությունները</u>

20. 2013 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 01/9012 գրությամբ Հանձնաժողովը ստացել է Երևանի քաղաքապետի պարզաբանումները, որտեղ Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը նշում է՝ «Տարածված տեղեկությունները, իբրև թե որոշումը կայացվել է անձնական կամ մերձավորների

շահագրգռվածության արդյունքում, չեն համապատասխանում իրականությանը. 2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ և առ այսօր ո՛չ ես և ո՛չ էլ ինձ հետ փոխկապակցված անձինք չեն հանդիսացել կամ հանդիսանում Երևանում ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից որևէ մեկի մասնակից կամ բաժնետեր»:

6. <u>Հանձնաժողովի եզրակացությունը</u>

21. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարույթի հարուցման համար հիմք է հանդիսացել Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վ. Հոկտանյանի դիմումը՝ Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում պատասխանել դիմումում արծարծված կոնկրետ հարցերին: Դիմումում, ըստ էության, բարձրացվել են հետևյալ հարցերը.

1. Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի կողմից գույքի և եկամուտների հայտարարագիրը որպես Երևանի ավագանու թեկնածու ԿԸՀ ներկայացնելուց հետո մամուլում տեղ են գտել տարաբնույթ մեկնաբանություններ՝ քաղաքապետի կողմից ԿԸՀ և հանձնաժողով ներկայացրած գույքի և եկամուտների հայտարարագրերի անհամապատասխանության վերաբերյալ:
2. Արդյո՞ք դիմումում նշված մամուլի հրապարակումները համապատասխանում են իրականությանը:
3. Ներքաղաքային փոխադրավարձը բարձրացնելիս քաղաքապետը գտնվել է արդյո՞ք շահերի բախման իրավիճակում կամ եղել է նման ռիսկ,
4. Ներդրումները կառավարելիս քաղաքապետի կողմից չեն օգտագործվել արդյո՞ք պաշտոնեական դիրքը և լիազորությունները:

22. Առաջին հարցի կապակցությամբ Հանձնաժողովը գտնում է, որ հարկ է պարզաբանել, որ համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ բարձրաստիճան պաշտոնատար անձինք Հանձնաժողովին հայտարարագիր են ներկայացնում «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով նախատեսված պաշտոն ստանձնելիս կամ դադարեցնելիս, ինչպես նաև՝ նշված պաշտոններում պաշտոնավարման ընթացքում յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա փետրվարի 15-ը:

23. ՀՀ կառավարությունը իր 2012 թվականի փետրվարի 23-ի թիվ 205-Ն որոշմամբ հաստատել է բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ հարկային տարվա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի ու բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականությունները

ստանձնելու կամ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի օրինակելի ձևերը:

24. Միաժամանակ համաձայն ՀՀ Ընտրական օրենսգրքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

«Թեկնածուների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում, թեկնածուները համապատասխան ընտրական հանձնաժողով են ներկայացնում հայտարարագիր՝ իրենց գույքի և եկամուտների մասին, իսկ Հանրապետության Նախագահի թեկնածուները՝ նաև ինքնակենսագրություն և մեկ լուսանկար:»

նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝

«Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանում է հայտարարագրերի ձևերը (Հանրապետության Նախագահի թեկնածուների, կուսակցությունների և կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների համար՝ նաև էլեկտրոնային ձևերը), ներկայացման կարգը, ինչպես նաև այն օրը, որի դրությամբ ներկայացվում է գույքի հայտարարագիրը, և այն ժամանակահատվածը, որի համար ներկայացվում է եկամուտների հայտարարագիրը:»

25. Այսպիսով, բարձրաստիճան պաշտոնատար անձը Հանձնաժողովին ներկայացնում է հայտարարագիր ինչպես պաշտոնը ստանձնելիս կամ դադարեցնելիս այնպես էլ յուրաքանչյուր տարի: Ընդ որում, պաշտոնը ստանձնելիս կամ դադարեցնելիս ներկայացվող և ամեն տարի պարբերաբար ներկայացվող հայտարարագրերը ունեն բովանդակային տարբերություններ: Հիմնական տարբերությունն այն է, որ յուրաքանչյուր տարի պարբերաբար ներկայացվող հայտարարագրում բարձրաստիճան պաշտոնատար անձը շարժական և անշարժ գույքի մասով նշում է միայն այն շարժական կամ անշարժ գույքը որը ձեռք է բերվել կամ օտարվել է հաշվետու հարկային տարվա ընթացքում, իսկ պաշտոնը դադարեցնելու կամ ստանձնելու հայտարարագրում պաշտոնատար անձը նշում է պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ իրեն սեփականության իրավունքով պատկանող շարժական կամ անշարժ գույքը:

26. Որպես թեկնածու ԿԸՀ ներկայացվող հայտարարագիրը, ինչպես պաշտոնը ստանձնելիս կամ դադարեցնելիս Հանձնաժողովին ներկայացվող հայտարարագիրը, ֆիքսում է տվյալ պահին թեկնածուին սեփականության իրավունքով պատկանող ողջ անշարժ կամ շարժական գույքը: Ակնհայտ է, որ ԿԸՀ ներկայացվող հայտարարագիրը բովանդակությամբ տարբերվում է յուրաքանչյուր տարի հանձնաժողովին ներկայացվող հայտարարագրերից, քանի որ, ըստ էության, առաջինում նշվում է տվյալ օրվա դրությամբ թեկնածուին պատկանող, իսկ երկրորդում՝ միայն հաշվետու տարվա ընթացքում օտարված կամ ձեռքբերված շարժական և անշարժ գույքը:

27. Հաշվի առնելով վերոգրյալը Հանձնաժողովը փաստում է, որ մամուլում առկա տարաբնույթ մեկնաբանությունները՝ կապված Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանի ԿԸՀ և Հանձնաժողովին ներկայացված հայտարարագրերում արտացոլված անշարժ և շարժական գույքի անհամապատասխանությունների հետ, ծագել են տարբեր բովանդակություն ունեցող երկու հայտարարագրերի համեմատության արդյունքում: Եթե Տ. Մարգարյանի կողմից ԿԸՀ ներկայացված հայտարարագրում արտացոլվել է 2013թ. մարտի 1-ի դրությամբ սեփականության իրավունքով նրան պատկանող ողջ անշարժ և շարժական գույքը, ապա Հանձնաժողովին ներկայացված 2011 և 2012 թվականների Հայտարարագրերում արտացոլված են միայն համապատասխան տարիների ընթացքում անշարժ կամ շարժական գույքի ձեռքբերումը կամ օտարումը:

28. Հանձնաժողովն իրականացրել է Երևանի քաղաքապետի պաշտոնը ստանձնելիս Հանձնաժողով ներկայացրած հայտարարագրի տվյալների համադրումը ԿԸՀ ներկայացված հայտարարագրի, ինչպես նաև ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից և ՀՀ ԿԱ ոստիկանությունից ստացված՝ Տ. Մարգարյանին պատկանող շարժական և անշարժ գույքի վերաբերյալ տվյալների հետ և անհամապատասխանություններ չի հայտնաբերել:

29. **Այսպիսով՝ ի պատասխան բարձրացված առաջին հարցի, որը կապված է Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի կողմից գույքի և եկամուտների հայտարարագիրը որպես Երևանի ավագանու թեկնածու ԿԸՀ ներկայացնելուց հետո մամուլում սկիզբ առած կասկածների և տարաբնույթ մեկնաբանությունների հետ՝ Հանձնաժողովը փաստում է, որ կասկածները կարող են ծագել բովանդակությամբ տարբեր հայտարարագրեր միմյանց հետ համեմատելու արդյունքում և, որ համադրելի հայտարարագրերում արտացոլված անշարժ և շարժական գույքի կազմի մեջ անհամապատասխանություններ չկան:**

30. Առաջադրված երկրորդ հարցի կապակցությամբ Հանձնաժողովը փաստում է, որ Երևանի քաղաքապետի կողմից ներկայացված Երևան քաղաքի ներքաղաքային տրանսպորտի փոխադրումներ իրականացնելու լիցենզիա ունեցող կազմակերպությունների ցանկում ներառված իրավաբանական անձանց վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահին՝ 2012 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո մինչ այս պահը չի հանդիսացել և հանդիսանում ներքաղաքային տրանսպորտի փոխադրումներ իրականացնող որևէ կազմակերպության մասնակից կամ բաժնետեր:

31. Հանձնաժողովը փաստում է նաև, որ առկա է Երևանի քաղաքապետի պաշտոնական հայտարարությունը առ այն, որ 2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ և մինչ այսօր ո՛չ ինքը և ո՛չ էլ իր հետ փոխկապակցված անձինք չեն հանդիսացել կամ հանդիսանում Երևանում ուղևորափոխադրումներ իրականացնող որևէ կազմակերպության մասնակից կամ բաժնետեր: Հարկ է նշել, որ հակառակը ապացուցող փաստեր առկա չեն նաև Հանձնաժողովին հասցեագրված դիմումում: Հանձնաժողովի կատարած ուսումնասիրությունները նույնպես նման փաստեր չեն բացահայտել: Հետևաբար՝ Հանձնաժողովը չի կարող քննարկման առարկա դարձնել նշված կազմակերպությունների կապակցությամբ Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանի շահերի բախման իրավիճակում գտնվելու հարցը:

32. **Այսպիսով՝ ի պատասխան երկրորդ հարցի, «արդյո՞ք դիմումում նշված հրապարակումներում բերված փաստերը համապատասխանում են իրականությանը»՝ Հանձնաժողովը փաստում է, որ իր տրամադրության տակ չունի որևէ փաստ, որը կվկայեր, որ դիմումում նշված պնդումները համապատասխանում են իրականությանը:**

33. Երրորդ և չորրորդ հարցերին պատասխանելու անհրաժեշտությունը վերանում է, քանի որ նախորդ հարցի քննարկումն արդեն իսկ պարունակում է դրանց պատասխանը: Համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի, որպեսզի բարձրաստիճան պաշտոնատար անձը գտնվի շահերի բախման իրավիճակում անհրաժեշտ է, որ նա ընդունի որոշում կամ կատարի գործողություն, որը կհանգեցնի <u>իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրության բարելավմանը</u>: Հետևաբար, համաձայն օրենքի դրույթների՝ այն դեպքում, երբ բարձրաստիճան պաշտոնատար անձի կայացրած որոշման կամ կատարած գործողության հասցեատերերի մեջ բացակայում է ինքը՝ բարձրաստիճան պաշտոնատար անձը կամ իր հետ փոխկապակցված անձինք և առկա չէ նրանց գույքային կամ իրավական դրության բարելավում, ապա անհնարին է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով խոսել շահերի բախման իրավիճակի մասին:

34. Հաշվի առնելով վերոգրյալը Հանձնաժողովը եզրակացնում է՝

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վ. Հոկտանյանի դիմումում և ներկայացված հրապարակումներում առկա փվյալները, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքները հիմք չեն տալիս Հանձնաժողովին եզրակացնելու, որ Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը Երևան քաղաքի ներքաղաքային տրանսպորտի փոխադրումներ իրականացնելու լիցենզիա ունեցող կազմակերպությունների առնչությամբ գտնվել է շահերի բախման իրավիճակում: